ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԽՈՒԴՈՅԱՆ ԳԱՐԻԿ ՄԱՐՏԻՆԻ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԲ.00.02. Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2021

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ХУДОЯН ГАРИК МАРТЫНОВИЧ

ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ОБЩЕЙ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ И ПОЛИТИКИ БЕЗОПАСНОСТИ ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 - Публичное право (конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление)

Ереван-2021

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Վ. Վ. Ստեփանյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գ. Բ. Դանիելյան**
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ա. Գ. Սարգսյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ Արդարադատության ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թ. հունիսի 1-ին՝ ժամը 14^{30}-ին, Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2021 թ. ապրիլի 20-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավ. գիտությունների թեկնածու, դոցենտ **Տ. Հ. Սուջյան**

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор **В. В. Степанян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Г. В. Даниелян**
кандидат юридических наук, доцент **А. Г. Саргсян**

Ведущая организация: **Академия юстиции РА**

Защита состоится 1-го июня 2021 г. в 14^{30} часов на заседании специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 20-ого апреля 2021 года.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, доцент **Т. О. Суджян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: 20-րդ դարի երկրորդ կեսից միջպետական համագործակցության շրջանակներում միջազգային և տարածաշրջանային անվտանգության ու կայունության ամրապնդման համար կարևոր դերակատարում ձեռք բերեցին միջազգային կազմակերպություններն ու տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումները (ՄԱԿ, ԵԱՀԿ, ԵՄ, ԵԱՏՄ, ՇՀԿ, ՀԱՊԱ և այլն): Նշված միավորումների շարքին, որպես ինքնիշխան պետությունների՝ արժեքահեն գաղափարների միավորման միասնական հարթակ, աներկբա կարելի է դասել Եվրոպական Միությունը (այսուհետ՝ ԵՄ), որը հանդիսանում է տարածաշրջանի պետությունների հասարակական կյանքի բազմաթիվ ոլորտների ինտեգրման, ընդհանուր շահի ձևավորման, միասնական տեսակետների ներկայացման, ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության իրականացման, ինչպես նաև՝ այլ կարևոր արժեքների համախմբման միություն:

Գոյաբանական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ԵՄ անդամ պետություններն իրավապայմանագրային հենքի վրա կյանքի կոչեցին ԵՄ ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության (այսուհետ՝ ԸԱԱՔ) հայեցակարգը: ԵՄ ԸԱԱՔ և ավելի ուշ ձևավորված ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության կայացման համար, հենվելով սեփական և առավելապես ՆԱՏՕ-ի ռազմաքաղաքական գործիքակազմի վրա, ԵՄ-ն համախմբվեց՝ հանդես գալով որպես կոլեկտիվ անվտանգության ապահովման եվրոպական խաղացող և համաշխարային անվտանգության համակարգի երաշխավորման կարևորագույն տարր՝ իրականացնելով բազմաթիվ խաղաղապահ, իրավապահ և այլ առաքելություններ: Այս համատեքստում, լիովին կիսելով եվրոպական ընտանիքի հետ միևնույն արժեհամակարգային տեղորոշիչները և գնահատելով ժամանակակից անվտանգային սպառնալիքները, Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ ՀՀ) իր ռազմական, ռազմաքաղաքական և արտաքին հարաբերությունների վեկտորը պետք է հնարավորինս միատեղի ԵՄ գործընկերների քայլերի հետ՝ պահպանելով սեփական անվտանգության և ինքնիշխանության բաղադրիչը: Միևնույն ժամանակ, ՀՀ-ի նկատմամբ որոշ հարևան երկրների ակնհայտ թշնամական տրամադրվածությունը, ինչպես նաև՝ մեր պետության՝ փաստացի Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (այսուհետ՝ ՀԱՊԿ) ռազմաքաղաքական դաշինքում գտնվելու փաստը ստիպում են մեր կողմից ձեռնարկվելիք բոլոր քայլերը, ներառյալ՝ անվտանգության սպառնալիքներին հակազդելը, բացառապես բխեցնել ՀՀ ազգային անվտանգության շահից՝ հիմք ընդունելով ստանձնած իրավապայմանագրային պարտավորությունները: Որպես արդյունք, առաջանում է

արդիական անհրաժեշտություն՝ վերլուծելու գործող ՀՀ իրավապայմանագրային բազան և դրա հենքի վրա գործող ու ծավալվող համագործակցությունը, վեր հանել առկա հիմնախնդիրները, կատարել եզրահանգումներ և առաջադրել համարժեք լուծումներ: Հենց վերը նշված հանգամանքներով էլ պայմանավորված է հետազոտվող թեմայի արդիականությունը:

Թեմայի մշակվածության աստիճանը: ԵՄ ԸԱԱՔ իրավական հիմնախնդիրներին անդրադարձ են կատարել ոլորտի այնպիսի հանրաճանաչ գիտնականներ, ինչպիսիք են՝ Ռամզես Վեսսելը, Փանոս Կոուտրակոսը, Մարտին Տրիբուսը, Ա. Էլիսենը, Ֆեդերիգա Բինդին, Ուէյն Սանդհոլձը, Ալեք Սթոն Սուիթը, Ռոնալդ Թիերսկին, Հելեն Ուոլասը, Մարկ Ա. Փոլաքը, Ալասդար Ռ. Յոնգը, Ջիովանա Բոնոն, Հուբերթ Հեյնելթը, Մայքլ Կնոդը, Կարեն Հենդերսոնը, Կառոլ Վեվերը, Մարիո Թելոն, Ռիչարդ Գ. Վիթմանը, Սթեֆան Վոլֆը, Վիլհելմ Գերմանը, Կարեն Ե. Սմիթը, Ֆրանց Կերնիցը, Սոնիա Լուկարելին, Իան Մաներսը, Ռալֆ Հ. Ֆոլսոմը, Շառլոթ Բրեթհերթոնը, Ջոն Վոգլերը, Ուրսուլա Ս. Շրոյդերը, Ալեքսանդր Մոենսը, Լենարդ Ջ. Կոհենը, Ալեն Գ. Սենսը, Ս. Վարոստան, Ջէյ Վեյլեր, Տ. Մարոն, Լ. Մ. Էնտինը, Ն. Բ. Տոպորնինը և այլոք: Նրանք իրենց աշխատություններում կատարել են ԵՄ ԸԱԱՔ համեմատաիրավական ուսումնասիրություն և վերլուծություն՝ վեր հանելով բազմաթիվ հիմնախնդիրներ: Ատենախոսության համար տեսական հիմք են հանդիսացել նաև հայրենական գիտնականներ՝ Ա. Ղազինյանի, Ա. Սարգսյանի, Ա. Հարությունյանի, Վ. Քոչարյանի, Ե. Կիրակոսյանի, Շ. Ավագյանի, Տ. Բալայանի, Ռ. Կիրակոսյանի և այլոց ոլորտային ուսումնասիրությունները և գիտական աշխատությունները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Սույն հետազոտության նպատակն է ԵՄ ԸԱԱՔ/ԸԱՊՔ պատմական կայացման ուսումնասիրումը, դրա գործառնական առանձնահատկությունների վերհանումը, ԵՄ ԸԱԱՔ/ԸԱՊՔ իրացումը ԵՄ ինստիտուտների կողմից, անվտանգության բնագավառում առաջավոր եվրոպական փորձի ուսումնասիրումը և կիրարկման հնարավորության դիտարկումը ՀՀ ռազմաքաղաքական բաղադրիչում, անվտանգության ոլորտում ՀՀ-ԵՄ փոխգործակցությանը միտված քայլերի նախանշումը: Այդ նպատակին համապատասխան՝ առաջ են քաշվել հետազոտության հետևյալ խնդիրները՝

1)ուսումնասիրել ԵՄ ԸԱԱՔ զարգացման պատմական նախադրյալները՝ բացահայտելու ընթացիկ ձեռքբերումներն ու ձախողումները,

2) իրականացնել ԵՄ ԸԱԱՔ պատմաիրավական և համակարգային վերլուծություն՝ ներառյալ իրավակիրառ պրակտիկան,

3) հետազոտել ԵՄ ԸԱԱՔ ոլորտում առկա հիմնական հիմնախնդիրները,

4) ուսումնասիրել իրավական տիրույթում ԵՄ ԸԱԱՔ փոխգործակցութ-

յունը ԵՄ ինստիտուտների հետ,

5) վերլուծել անվտանգության և արտաքին քաղաքականության ոլորտներում ԵՄ և ՀՀ իրավական փոխգործակցությունն ու հարաբերակցությունը՝ տարբեր ռազմաքաղաքական դաշինքների մաս կազմելու համատեքստում, վեր հանել առկա հիմնախնդիրները,

6) առաջարկել ուսումնասիրվող ոլորտում ՀՀ և ԵՄ միջև փոխգործակցության խորացմանը միտված արդյունավետ քայլեր,

7) առաջարկել ուսումնասիրվող ոլորտում ՀՀ-ի՝ որպես անվտանգության տարածաշրջանային խաղացողի դերի բարձրացմանն ուղղված քայլեր:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն է ԵՄ ԸԱԱՔ/ ԸԱՊՔ կայացման և իրագործման արդյունքում առաջացող, զարգացող և (կամ) դադարող հասարակական հարաբերությունները: Հետազոտության առարկան են ԵՄ ԸԱԱՔ/ԸԱՊՔ հիմնադիր պայմանագրերը, ոլորտը կարգավորող իրավական և այլ փաստաթղթերը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության նպատակին հասնելու և առաջադրված խնդիրները հետազոտելու համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել գիտական ուսումնասիրության ինչպես ընդհանուր՝ դիալեկտիկական, տրամաբանական, պատմական, քննադատական, վերլուծական, ընդհանրացման, այնպես էլ մասնավոր՝ միջառարկայական, ձևական-տրամաբանական, պատմահրավական, տրամաբանական-իրավական, գործառնական, իրավական վերլուծության, համակարգակառուցվածքային և իրավահամեմատական մեթոդները:

Հաշվի առնելով ատենախոսության հետազոտության առարկայի առանձնահատկությունը՝ վերջնարդյունքին հասնելը պահանջել է նաև իրավաբանական ճանաչման այլ, հատուկ մեթոդների կիրառում, որոնց շարքից կարելի է առանձնացնել իրավահամեմատական և կառուցվածքային-իրավական մեթոդները: Իրավահամեմատական մեթոդի շրջանակներում համադրվել են ԸԱԱՔ ոլորտում ԵՄ փոխգործակցությունն այլ միջազգային կազմակերպությունների հետ: Կառուցվածքային-իրավական մեթոդը հնարավորություն է տվել՝ բացահայտելու ԵՄ ընդհանուր անվտանգության և պաշտպանության զարգացվածության աստիճանը, կանխորոշելու հետագա զարգացման միտումներն ու օրինաչափությունները համապատասխան իրավական նորմերի և դրանց աղբյուրների վերլուծության հիման վրա: **Հետազոտության տեսական հիմքը**: Ատենախոսության հետազոտության համար տեսական հիմքն են հանդիսացել ԵՄ իրավական ակտերը և իրավակիրառ պրակտիկան, ինչպես նաև՝ ԵՄ իրավունքի ոլորտին վերաբերող արտասահմանյան հեղինակների աշխատությունները, մենագրությունները և գիտական հոդվածները: Դրանց թվին են դասվում այնպիսի հեղինակների աշխատություններ, ինչպիսիք են՝ Ռ. Վեսսելը, Փ. Կոուտրակոսը, Մ. Տրիբու-

սը, Ֆ. Բինդին, Ա. Սուիթը, Ա. Ռ. Յոնգը, Ջ. Բոնոն, Մ. Կնոդը, Կ. Հենդերսոնը, Կ. Վեվերը, Մ. Թելոն, Ս. Վոլֆը, Վ. Գերմանը, Կ. Ե. Սմիթը, Ֆ. Կերնիցը, Ի. Մաներսը, Շ. Բրեթհերթոնը, Ջ. Վոգլերը, Ու. Ս. Շրոյդերը, Ա. Մոենսը, Լ. Ջ. Կոհենը, Ա. Գ. Սենսը, Ս. Վարոստան, Ջ. Վեյլեր, Տ. Մարոն, Մ. Սմիթը, Կ. Սմիթը, Լ. Ռիսսոն, Հ. Ջոլիանը, Ա. Կազարավսկայան, Կ. Հիլը, Ա. Մենոնը, Մ. Ռիխարդը, Ա. Նութինգը, Ռ. Բեռնարդը, Կ. Ֆլոքիգերը, Մ. Կիպիանին, Լ. Դելկուռը, Ֆ. Լաբոռը, Ռ. Պետրովը, Լ. Մ. Էնտինը, Ն. Բ. Տոպորնինը և այլոք:

Ատենախոսության հետազոտության տեսական հիմքն են նաև հայ գիտնականներ՝ Ա. Ղազինյանի, Ա. Սարգսյանի, Ս. Սարգսյանի, Ս. Մինասյանի, Է. Աբրահամյանի, Ա. Ղեվոնդյանի, Ն. Գալստյանի, Ա. Այվազյանի, Ա. Առաքելյանի, Ա. Մնացականյանի, Վ. Գեղամյանի, Ն. Մկրտչյանի, Տ. Եփրեմյանի, Ս. Վասիլյանի, Վ. Տեր-Մաթևոսյանի, Ա. Գրիգորյանի, Ռ. Գիրագոսյանի, Հ. Կոստանյանի, Ա. Թերզյանի, Վ. Աթոյանի, Շ. Մովսիսյանի, Ա. Հայրապետյանի, Ա. Հարությունյանի, Վ. Քոչարյանի, Ե. Կիրակոսյանի, Շ. Ավագյանի, Ռ. Կիրակոսյանի և այլոց աշխատությունները:

Եվ, վերջապես, հետազոտության մեջ օգտագործվել են նաև քաղաքագիտության, փիլիսոփայության, միջազգային իրավունքի, միջազգային հարաբերությունների, լեզվաբանության և սոցիոլոգիայի ոլորտների հայրենական և արտասահմանյան գիտնականների աշխատություններ:

Հետազոտության նորմատիվ հիմքը: Ատենախոսության նորմատիվ հիմքն են 1945 թ. ՄԱԿ-ի կանոնադրությունը, 1947 թ. Դյունքերքի, 1948 թ. Բրյուսելի, 1949 թ. Վաշինգտոնի, 1952 թ. Եվրոպական պաշտպանական ընկերակցության հիմնադրման մասին, 1957 թ. Բրյուսելի Մոդիֆիկացված, 1957 թ. Եվրոպական տնտեսական ընկերակցության հիմնադրման մասին, 1958 թ. Բենիլյուքսի, 1992 թ. ԵՄ-ի մասին, 1992 թ. Հավաքական անվտանգության մասին, 1997 թ. Ամստերդամի, 2001 թ. Նիցի և 2007 թ. Լիսաբոնի պայմանագրերը, 2002 թ. Հավաքական անվտանգության մասին Պայմանագրի կազմակերպությունը, 1996 թ. ԵՄ-ՀՀ միջև կնքված Գործընկերության և համագործակցության և 2017 թ. Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրերը, Եվրոպական Սահմանադրությունը հիմնադրելու մասին 2003 թ. պայմանագրի նախագիծը, 2003 թ. Եվրոպական անվտանգության և 2016 թ. ԵՄ գլոբալ ռազմավարությունները, 1986 թ. Եվրոպական միասնական ակտը, ինչպես նաև ԵՄ ինստիտուտների և մարմինների կողմից ընդունված այլ բազմաթիվ իրավական ակտերը (դիրեկտիվներ, որոշումներ, հռչակագրեր, պլաններ և այլն): Ատենախոսության նորմատիվ հիմքն են հանդիսացել նաև ոլորտին առընչվող ԵՄ արդարադատության դատարանի նախադեպային որոշումները:

Հետազոտության փորձառական (էմպիրիկ) հիմքը: Հետազոտության փորձառնական հիմք են հանդիսանում այն տվյալները, որոնք ստացվել են ԵՄ ԸԱԱՔ/ ԸԱՊՔ իրագործման վերաբերյալ տեղեկությունների վերլուծության արդյունքում:

Ատենախոսության գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները: Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվում է դիտարկվող հարցերի շրջանակում և հրապարակային պաշտպանության ներկայացվող դրույթներում: Ներկայացված գիտական աշխատության մեջ փորձ է արվել համակարգված ուսումնասիրության ենթարկել ԵՄ ԸԱԱՔ ոլորտը, այդ թվում՝ ՀՀ-ԵՄ փոխգործունեության իրավական հիմքերը՝ նրանց տարբեր ռազմաքաղաքական դաշինքների մաս կազմելու տեսանկյունից: Այս համատեքստում ուսումնասիրության առարկա են դարձել ԵՄ ԸԱԱՔ/ԸԱՊՔ ձևավորման գործընթացը, իրավական հիմքերը, նպատակները, ինստիտուտների կողմից որոշումների կայացման և տարաբնույթ առաքելությունների իրականացման իրավական ընթացակարգերը, ԵՄ ԸԱԱՔ/ԸԱՊՔ համակարգի մարմինների կառուցվածքը և լիազորությունները, արտաքին հարաբերություններում ԵՄ միջազգային իրավասուբյեկտությունը և ԵՄ կողմից երրորդ երկրներին առաջարկվող միջազգային համաձայնագրերի տեսակները, ԵՄ - Հարավային Կովկասի պետություններ պայմանագրային և արտապայմանագրային («Եվրոպական հարևանության քաղաքականություն», «Արևելյան գործընկերություն» ծրագիր) համագործակցության ձևաչափերը և դրանց իրավական հիմքերը: Համակարգային վերլուծության են ենթարկվել ՀԱՊԿ-ի կառուցվածքը և դրա գործունեության իրավական հիմքերը, կառույցում ՀՀ դերակատարումը և վերջինիս փոխհամագործակցությունը ՀԱՊԿ անդամ այլ պետությունների հետ և, վերջապես, ՀԱՊԿ-ՆԱՏՕ փոխգործակցությունը:

Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվում է նաև հրապարակային պաշտպանության ներկայացվող հետևյալ հիմնական դրույթներում.

1.ԵՄ սեփական անկախ և ինքնաբավ բանակ ունենալու ձգտումը կմնա ընդամենը գաղափար և ցանկություն, քանի դեռ չկա իրապես (արժեհամակարգային, գաղափարական, նպատակային) համախմբված, միասնական ԵՄ՝ միասնական ԸԱՊՔ-ով: Կախվածությունը ԱՄՆ-ից, ինչպես նաև՝ ներկառույցային տարաձայնությունները, հակասությունները և հակադրումը ՆԱՏՕ-ի որոշ անդամների միջև կարող են հիմնավորվել հետևյալ փաստարկներով՝

• ԵՄ առաջատար պետություններից մեկը հանդիսացող Ֆրանսիան, ի դեմս նախագահի, 2019 թ. նոյեմբերին հայտնեց «ՆԱՏՕ-ի ուղեղի մահվան» մասին՝ հիմնավորելով դա ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի միջև ռազմավարական հարցե-

ռում համաձայնության բացակայությամբ, ինչը կրկին նրա կողմից վերահաստատվեց 2020 թ. հունիսի 22-ին՝ ՆԱՏՕ-ի երկու անդամ (Թուրքիա և Ֆրանսիա) պետությունների միջև Միջերկրական ծովում առաջացած ընդհարման պատճառով:

• Իր հերթին ԱՄՆ նախկին նախագահ Դ. Թրամփը, բացի եվրոպական երկրների անվտանգության համար վերջիններիս կողմից ՆԱՏՕ-ի բյուջե ակնկալվող մուտքագրումների բարձրացումից, ձեռնարկեց շուրջ 75 տարի Գերմանիայում տեղակայված ԱՄՆ-ի ստորաբաժանումների զգալի մասի վերատեղակայումը Լեհաստանում՝ կյանքի կոչելով թե՛ «անհնազանդներին ու ըմբոստներին» պատժելու, թե՛ նոր, հավատարիմ արբանյակներին (օրինակ՝ Մերձբալթյան երկրներ, Ռումինիա և այլն) խրախուսելու և հովանավորելու քաղաքականությունը:

2. ԵՄ ԸԱԱՔ/ԸԱՊՔ կայացման համար արդիական ենք համարում ԵՄ սեփական, ինքնաբավ զինված ուժերի և ռազմական արդյունաբերության կարողությունների ձևավորումը, ինչպես նաև՝ ոլորտի նկատմամբ խորհրդարանի և դատարանի լիազորությունների ընդլայնումը:

3. Ինքնավար, ինքնաբավ, իրական, ՆԱՏՕ-ի ռեսուրսներից անկախ եվրոպական բանակ ձևավորելու համար առկա խոչընդոտները հանգում են հետևյալին՝

• ԵՄ-ում ընդհանուր քաղաքական կամքի բացակայություն (ԵՄ-ի որոշ պետություններ շարունակում են ապավինել ՆԱՏՕ/ԱՄՆ պաշտպանական երաշխիքին),

• ԵՄ-ում առկա տարբեր ռազմական, ռազմավարական, ռազմաքաղաքական մշակույթների, ներառյալ՝ ռազմական առումով չեզոք անդամ պետությունների առկայություն,

• ՆԱՏՕ-ի ռազմական ռեսուրսների համեմատությամբ ԵՄ-ի իրական հնարավորությունների սակավություն,

• Նշված ոլորտներում որոշումների ընդունման ոչ ճկուն ընթացակարգ, ինչը չի ապահովում միասնական դիրքորոշումների օպերատիվ ձևավորում,

• որոշ հարցերի վերաբերյալ, ներառյալ արտաքին հարաբերությունների բնագավառում, հայեցակարգային տարաձայնությունների առկայություն (օրինակ՝ միգրացիոն քաղաքականությունը ԵՄ-ի շրջանակներում, երկկողմ համագործակցությունը կամ պատժողական քաղաքականության դրսևորումը երրորդ երկրների հետ և այլն):

4. ԵՄ ինստիտուտների կողմից ԸԱԱՔ ոլորտում որոշումների ընդունման առկա գործիքակազմը չի ապահովում օպերատիվ որոշումների կայացում՝ նվազեցնելով ԵՄ-ի կողմից արդի մարտահրավերների կապակցությամբ համախմբվելու, դրանց արագ արձագանքելու հնարավորությունները և թույլ չտալով գլոբալ հարթակում ամբողջությամբ իրացնելու վերջինիս պո-

տենցիալը որպես անվտանգության ոլորտի լիիրավ դերակատար:

5. Անհրաժեշտ է ընդլայնել ԵՄ ինստիտուտների կողմից ձայների որակյալ մեծամասնությամբ որոշումների ընդունման ընթացակարգի կիրառումը ԸԱԱՔ ոլորտի նկատմամբ: Նշվածին հնարավոր կլինի հասնել նաև անդամ պետությունների միասնական մոտեցմամբ պայմանավորված՝ իրավական ընթացակարգերի բարեփոխման արդյունքում:

6. ՀՀ-ի համար արտաքին քաղաքականության և անվտանգության բնագավառում կարևոր ձեռքբերում կարելի է համարել ԵՄ-ի կողմից նախատեսվող տեխնիկական փորձաքննությունն ու աջակցությունը՝ զինված ուժերի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության համատեքստում: Այն կարևորվում է՝ հաշվի առնելով ՀՀ շրջադարձը դեպի խորհրդարանական կառավարում և դրանով պայմանավորված՝ խորհրդարանական դիվանագիտության դերի բարձրացումը և անվտանգության ոլորտի խորը բարեփոխումն ու արդիականացումը: Այդուհանդերձ, անհարժեշտ է արձանագրել, որ ՀՀ-ԵՄ երկկողմ իրավապայմանագրային տիրույթում ԸԱԱՔ/ԸԱՊՔ վերաբերյալ կարգավորումների առկայությունը, ներառյալ 2017 թ. նոյեմբերի 24-ին ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրում տեղ գտած կարգավորումները, ունեն վերանայման անհրաժեշտություն: Այս համատեքստում հարկ ենք համարում ընդգծել հետևյալը՝

• Անվտանգության և պաշտպանության բնագավառի վերաբերյալ ձեռք բերված համաձայնությունները համաձայնագրում կրում են առավելապես հռչակագրային բնույթ՝ զերծ մնալով կոնկրետ քայլերի, կառուցակարգերի, երաշխիքների նախանշումից:

• Նշված ոլորտներում համագործակցությունը հասկանալի պատճառներով ունի գործունեության տարածքային սահմանափակում՝ ի տարբերություն միջազգային համագործակցության այլ հարթակների (օրինակ՝ համագործակցությունը ՄԱԿ-ի, ՆԱՏՕ-ի շրջանակներում):

• Երկկողմ հարաբերությունները կարգավորող նորմերը համապատասխան գործընթացները վերահասցեագրում են այլ միջազգային հարթակների, մասնավորապես՝ ԵԱՀԿ, ինչը, մեր խորին համոզմամբ, նահանջ է երկկողմ հարաբերությունների զարգացման և դրանց արդյունավետության բարձրացման գործընթացում:

7. Կարելի է խնդրահարույց համարել նաև ԵՄ Արևելյան գործընկերության ծրագրի (այսուհետ՝ ԱլԳ) շրջանակներում մասնակից պետությունների նկատմամբ տարբերակված մոտեցումը՝ պոտենցիալ փոխկապակցմամբ արտոնելով ԱլԳ առաջատարներին, իսկ մնացած անդամների հետ վարելով ավելի սահմանափակ համագործակցություն, որով խաթարվում է ընդհանուր մոտեցման ռազմավարական համաչափությունը: Մոտեցումներում անորոշությունն ու հստակության բացակայությունը անհիմն ակնկալիք-

ներ և կողմնակալություն են առաջացնում: Ավելին, ԱլԳ-ի վերաբերյալ ԵՄ անդամ պետությունների ազգային մոտեցումների առանցքային տարբերությունները ոչ միանշանակ ազդեցություն են ունենում կայացվելիք վերջնական որոշումների վրա՝ ինքնին հարցականի տակ դնելով ընդհանուր մոտեցումների համահունչ լինելը: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ ԵՄ-ն շահառու երկրների առջև որևէ պայման չէր դնում Եվրոպական հարևանության քաղաքականությանը մասնակցելու համար, այլ՝ սկսում էր համագործակցությունը առկա (միմյանցից տարբեր) պայմաններում, մինչդեռ ծրագրին մասնակցող պետությունները կարող էին ունենալ ԵՄ-ի հետ հարաբերությունները խորացնելու տարբեր շարժառիթներ: Մասնավորապես, Վրաստանի եվրոպական ընտրությունը պայմանավորված էր գերազանցապես հակառուսական տրամադրությունների աճով, իսկ Մոլդովայի դեպքում՝ նաև Ռումինիայի հետ հարաբերությունների սերտացման հեռանկարով: Հայաստանի պարագայում գլխավոր շարժառիթը տնտեսական առաջընթացի և եվրոպական արժեհամակարգի ձեռքբերման հնարավորությունն էր, որը, սակայն, բավականին համեստ գործոն է խորը ու բազմաշերտ հարաբերություններ հաստատելու համար:

8. Կարևոր հիմնախնդիրներից մեկը վերաբերում է ՀՀ ռազմավարական դաշնակից կառույց ՀԱՊԿ-ին, որի գործունեության իրավական կարգավորման ուսումնասիրության արդյունքում, վեր հանելով առկա բացերն ու թերությունները, առաջարկվում է՝

• ՀԱՊԿ-ի համար, ՆԱՏՕ-ի մոդելի նմանությամբ (ՆԱՏՕ Պայմանագիր 5-րդ հոդված), նախատեսել անմիջական խմբային օգնության տրամադրում՝ ՀԱՊԿ որևէ անդամի վրա ցանկացած ագրեսիայի դեպքում՝ առանց վերջինիս կողմից դաշնակիցներից լրացուցիչ օգնության խնդրանքի:

• Միջազգային հարթակներում կտրուկ և միասնական դիրքորոշման ցուցաբերում՝ անկախ առկա ներկազմակերպական հակասություններից կամ անհամաձայնություններից: Կարծում ենք, որ այդ նպատակով տեղին և իրավաչափ է կիրառել ՀԱՊԿ Կանոնադրության 7-րդ հոդվածով սահմանված կարգավորումները (օրինակ՝ միացյալ զորամիավորման, խմբի տեղակայումը անվտանգության և կայունության սպառնալիք հանդիսացող վայրում հավաքական պաշտպանության պատրաստակամություն ցուցաբերելու համար, ինչը կարող է արդյունավետ լինել, մասնավորապես, ՀՀ-ի պարագայում):

9. ՀԱՊԿ անդամ որոշ պետությունների փաստացի գործելակերպի տարամիտումը հանգուցալուծելու համար, որով իրապես վնաս է հասցվում կազմակերպության հեղինակությանը և գործունեության արդյունավետությանը, առաջարկվում է՝

• ՀԱՊԿ Պայմանագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունը շարադրել

հետևյալ խմբագրությամբ. «Անդամ պետությունները կխորհրդակցեն միմյանց հետ միջազգային անվտանգության բոլոր կարևոր հարցերով, որոնք շոշափում են իրենց շահերը և կհամաձայնեցնեն այդ հարցերով դիրքորոշումները, իսկ անհամաձայնության դեպքում ձեռնպահ կմնան Կազմակերպության շահերին հակասող միակողմանի քայլերից»:

• ՀԱՊԿ Կանոնադրության 9-րդ հոդվածում ավելացնել 2-րդ պարբերություն հետևյալ բովանդակությամբ. «Միասնական դիրքորոշման ձևակերպման կամ ձևավորված դիրքորոշման հետ անհամաձայնության դեպքում անդամ պետությունը ձեռնպահ է մնում անդամ պետության, դրանց խմբի և (կամ) Կազմակերպության շահին հակասող գործողություններից»:

• Հաշվի առնելով ՀԱՊԿ Կանոնադրության 2-րդ և 12-րդ հոդվածներով սահմանված Պայմանագրի և Կանոնադրության դրույթների (ներառյալ Կազմակերպության մարմինների կողմից ընդունած որոշումների) պարտադիրությունը՝ Կանոնադրության 9-րդ հոդվածը լրացնել 3-րդ պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ. «Արտաքին հարթակներում Պայմանագրով և Կանոնադրությամբ ստանձնած պարտավորությունները չկատարելը կամ միասնական, համաձայնեցված դիրքորոշմամբ հանդես չգալը կամ հանդես գալը ի վնաս Կազմակերպության, անդամ պետության կամ դրանց խմբի շահերի, առաջացնում է Կանոնադրության 20-րդ հոդվածով սահմանված սանկցիայի կիրառում»:

10. ՀԱՊԿ Գլխավոր քարտուղարի պաշտոնավարման և (կամ) լիազորությունների վաղաժամ դադարեցման իրավական բացի հանգուցալուծման համար առաջարկվում է ՀԱՊԿ Կանոնադրության 17-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը լրացնել հետևյալ նախադասությամբ. «Գլխավոր քարտուղարի պաշտոնավարման անհնարինության դեպքում անդամ պետությունը պահպանում է նշված պաշտոնի համար իր քաղաքացիներից նոր թեկնածու ներկայացնելու իրավունքը՝ իր համար սահմանված երեք տարվա ողջ ժամանակահատվածի ընթացքում»:

11. Հաշվի առնելով ՀՀ անդամակցությունը ՀԱՊԿ-ին և տարբեր հարթակներում սերտ համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ, չշրջանցելով իրավապայմանագրային և այլ ձևաչափերով ՀՀ ստանձնած պարտավորությունները, այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք համարում խորացնել անվտանգության ոլորտի փոխգործակցությունը բոլոր բարեկամ երկրների հետ՝ երկկողմ տարբերակով:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ ԵՄ և ՀՀ միջև ԸԱԱՔ/ԸԱՊՔ ոլորտներում համագործակցության խորացման համար: Ատենախոսության մեջ ներկայացված մոտեցումները, եզրահանգումներն ու հետազոտության արդյունքների վրա հիմնված առաջարկությունները կարող

են օգտագործվել ՀՀ-ԵՄ միջև իրավապայմանագրային (CEPA) և Եվրոպական հարևանության քաղաքականության, Արևելյան գործընկերության ծրագրային գործիքակազմերի, ՆԱՏՕ-ի և ՀԱՊԿ-ի միջև համագործակցության և փոխվստահության խորացման և ամրապնդման գործում: Հետազոտության արդյունքները կարող են նաև օգտակար լինել գիտական և ուսումնական գրականության նախապատրաստման նպատակներով՝ դրանք «Եվրոպական իրավունք», «Միջազգային իրավունք» և այլ հարակից ուսումնական դասընթացների շրջանակներում ներդնելով իրավաբանական բուհերի ուսումնական գործընթացում:

Հետազոտության արդյունքների փորձարկումն ու ներդրումը: Ատենախոսության թեման քննարկվել և հաստատվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնում: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրապարակած մի շարք գիտական հոդվածներում և ներդրված են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի ուսումնական գործընթացում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը պատրաստված է ՀՀ ԲՈՀ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխան և բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են վեց ենթագլուխ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը, խնդիրները, օբյեկտը, առարկան, մեթոդաբանական, տեսական, նորմատիվ և փորձառական հիմքերը, ձևակերպվում են գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, բացահայտվում են հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումն ու ներդրումը:

Առաջին գլուխը՝ «Եվրոպական Միության ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության իրավական կառուցակարգերի ձևավորումը և զարգացումը» վերտառությամբ, կազմված է երկու պարագրաֆից, որոնք վերաբերում են ոլորտի պատմական զարգացմանը և դրա կարգավորման հիմնական իրավապայմանագրային փաստաթղթերին ու ինստիտուտներին, ինչպես նաև՝ դրանցում առկա հիմնախնդիրներին:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության ոլորտներում եվրոպական քաղաքական դաշինքի ձևավորման նախադրյալները հետպատերազմյան շրջանում» վերտառությամբ, քննարկվում են երկրորդ համաշխարհային պատերազմից հետո եվրոպական տարածաշրջանում եվրոպական միասնական անվտանգութ-

յանն ուղղված պաշտպանական և քաղաքական միավորների ձևավորման գործընթացները և դրանց ապահովման իրավական ընթացակարգերը: Աշխատությունում ներկայացվում է եվրոպական անվտանգության համակարգի ձևավորման գործում նշանակալի ավանդ ունեցած հանրաճանաչ քաղաքական, ռազմական և այլ գործիչների ներդրումը, ինչպես նաև՝ քննարկվում են այնպիսի ռազմական միավորների և դաշինքների ձևավորման պատմահրավական հիմնահարցերը, ինչպիսիք են, օրինակ, Եվրոպական պաշտպանական ընկերակցությունը, Արևմտաեվրոպական Միությանը, ՆԱՏՕ-ն և այլն: Վերոհիշյալ հիմնախնդիրները հետազոտվել են՝ այդ գործընթացներում թե՛ եվրոպական պետությունների, թե՛ ԱՄՆ-ի մասնակցության համատեքստում:

Վերլուծելով պատմական գործընթացները՝ հեղինակն արձանագրում է, որ 20-րդ դարի 2-րդ կեսին եվրոպական տարածաշրջանում առկա էին բոլոր նախադրյալները՝ ամուր միություն ձևավորելու, սեփական անվտանգությունը երաշխավորելու և միջազգային անվտանգության գործում զգալի ներդրում ունենալու համար:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Եվրոպական Միության ընդհանուր արտաքին և անվտանգության ոլորտները կարգավորող հիմնադիր իրավական փաստաթղթերը» վերտառությամբ, լուսաբանվում են Եվրոպական Միության ստեղծման համար հիմք հանդիսացած իրավական պայմանագրերը և, մասնավորապես, դրանցում տեղ գտած պաշտպանական և անվտանգային ուղղվածություն ունեցող կարգավորումները, ինչպես նաև՝ այդ ընթացքում ձևավորված մարմիններն ու կառույցները: Իրավահամեմատական վերլուծության են ենթարկվել ԵՄ ԸԱԱՔ-ի համար հիմք հանդիսացած տարաբնույթ նորմատիվ և այլ փաստաթղթեր, ներառյալ՝ ԵՄ մասին պայմանագիրը:

Երկրորդ գլուխը՝ «Եվրոպական Միության ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության հիմնական ուղղությունները և դրանց ապահովման իրավական գործիքակազմը» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆից և նվիրված է Եվրոպական Միության անվտանգությանն ու հատկապես նոր ձևավորվող պաշտպանության բաղադրիչին, ինչպես նաև՝ եվրոպական արտաքին քաղաքականության ոլորտի իրավական կարգավորումներին, դրանց իրականացման գործիքակազմերին, սուբյեկտներին, մարմիններին, և ի վերջո, վերլուծության արդյունքում ի հայտ բերված հիմնախնդիրներին ու դրանց լուծումներին:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Եվրոպական Միության անվտանգության և պաշտպանության քաղաքականության հիմնական ուղղությունների իրավական կարգավորումը» վերտառությամբ, քննարկվում են 1998 թ. ֆրանս-բրիտանական համագործակցության արդյունքում ԵՄ ԸԱԱՔ-ի՝ Եվրոպական անվտանգության և պաշտպանական քաղաքականության վերափոխումը, դրան հաջորդած Եվրոպական արագ արձագանքման ուժերի ձևա-

վորումը, ՆԱՏՕ-ի գործիքակազմի օգտագործմամբ տարածաշրջանային ու գլոբալ անվտանգության ապահովման նպատակով տարաբնույթ առաքելությունների իրականացումը:

Միաժամանակ, պաշտպանության և անվտանգության կարգավորումների տեսանկյունից վերլուծության են ենթարկվել Ամստերդամի, Նիցի, Լիսաբոնի պայմանագրերը, ինչպես նաև՝ Եվրոպական Սահմանադրությունը հիմնադրելու մասին պայմանագիրը և բազմաթիվ այլ փաստաթղթեր: Քննարկվել են նաև ինստիտուտների և կառույցների կողմից ոլորտի վերաբերյալ կայացվող որոշումները և իրականացվող ընթացակարգերը:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Եվրոպական Միության ընդհանուր արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների իրավական կարգավորումը» վերտառությամբ, դիտարկվում է ԵՄ-ի արտաքին քաղաքականության ձևավորումը՝ 1950 թ. սկսած: Քննարկվել են ԵՄ արտաքին քաղաքականության ոլորտում իրավական կարգավորումների կենսագործման ձևաչափերը, ինստիտուցիոնալ փոխգործակցությունը, անդամ պետությունների և մարմինների միջև հաղորդակցման համակարգերի ձևավորումն ու իրագործումը, ինչպես նաև՝ քաղաքական հարթակում օգտագործվող գործիքակազմը: Վերլուծության են ենթարկվել համապատասխան մարմինների միջև խորհրդատվությունների անցկացման, համատեղ գործողությունների իրականացման, ընդհանուր դիրքորոշումների ձևավորման իրավական կառուցակարգերը՝ ընդգծելով կարգավորումներում առկա թերությունները:

Երրորդ գլուխը՝ «Անվտանգության և արտաքին քաղաքականության ոլորտներում Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության փոխհարաբերությունների իրավական կարգավորումը» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆից և նվիրված է քննարկվող ոլորտում Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության իրավապայմանագրային և այլ գործիքակազմերով իրականացվող փոխգործակցության հիմնախնդիրներին:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Անվտանգության և արտաքին քաղաքականության ոլորտներում Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության համագործակցության իրավական հիմքերը» վերտառությամբ, քննարկվում են ՀՀ և ԵՄ համագործակցության համար հիմք հանդիսացող պայմանագրերը, ներառյալ 1996 թ. ՀՀ-ԵՄ միջև կնքված Գործընկերության և համագործակցության և 2017 թ. Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրերը, ինչպես նաև՝ 2010 թ. բանակցությունների առարկա հանդիսացած, սակայն 2013 թ. այդպես էլ չստորագրված՝ Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիրը: Քննարկման առարկա են դարձել նաև անվտանգության, պաշտպանության և արտաքին քաղաքականության ոլորտներին վերաբերող համագործակցության ծրագրային այնպիսի գործիքներ, ինչպիսիք են, օրինակ, Եվրոպական հարևանության քաղաքակա-

նության ու Արևելյան գործընկերության ծրագրերը: Ուրվագծվել են պաշտպանության և արտաքին քաղաքականության ոլորտներում ՀՀ-ԵՄ համագործակցության խորացմանը խոչընդոտող գործոնները՝ նախանշելով դրանց հաղթահարման ուղիները:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Անվտանգության և արտաքին քաղաքականության ոլորտներում Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության իրավական փոխգործակցությունն ու հարաբերակցությունը՝ տարբեր ռազմաքաղաքական դաշինքների մաս կազմելու համատեքստում» վերտառությամբ, քննարկվում են ՀՀ-ԵՄ փոխգործակցության առանձնահատկությունները վերջիններիս տարբեր ռազմաքաղաքական դաշինքների մաս հանդիսանալու տեսանկյունից, որտեղ ԵՄ-ն հիմնականում ներգրավված և ներկայացված է ՆԱՏՕ-ի միջոցով, իսկ ՀՀ-ն հանդիսանում է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության լիիրավ հիմնադիր անդամ: Հիմնախնդիրն ուսումնասիրվում է՝ հաշվի առնելով արդի փուլում նշված դաշինքների լարված փոխհարաբերությունները և բարդ աշխարհաքաղաքական իրավիճակը:

Վերլուծության են ենթարկվել նաև ՀԱՊԿ-ի հիմնադիր փաստաթղթերը և վեր հանվել վիճահարույց կամ ոչ լիարժեք իրավական կարգավորումները՝ առաջարկելով դրանց բարելավմանը միտված համապատասխան լուծումներ: Հիմնավորվել և նախանշվել են ՀՀ անվտանգության համար էական նշանակություն ունեցող իրավական և քաղաքական կառուցակարգերը, որոնց ներդրումը ՀԱՊԿ-ի շրջանակներում կարող է դրական ազդեցություն ունենալ գլոբալ անվտանգության ոլորտում ՀՀ ռազմաքաղաքական դերի բարձրացման գործում:

Քննարկվել են նաև ՀՀ-ՆԱՏՕ համագործակցության ձևաչափերը, մասնավորապես, ՀՀ զինված ուժերի ստորաբաժանումների ներգրավումը ՆԱՏՕ-ի խաղաղապահ առաքելություններին և, այդ համատեքստում, այն գործուն քայլերի ներդրումը, որոնք կնպաստեն ՀՀ դերակատարմամբ ՀԱՊԿ-ՆԱՏՕ սառեցված շփումների վերամեկնարկին:

Դիտարկվել է նաև ՀԱՊԿ-ՆԱՏՕ փոխգործակցությունը և դրա արդյունքում վրա հասնող հետևանքների ազդեցությունը թե՛ ՀՀ-ի, թե՛ ԵՄ-ի հարաբերությունների վրա:

Եզրակացությունում, ամփոփելով ատենախոսությունում հետազոտված դրույթները՝ ներկայացվել են հետևյալ հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները՝

1.Հետպատերազմյան Եվրոպայում 20-րդ դարի երկրորդ կեսին արդեն ստեղծվել էին ամուր նախադրյալներ Եվրոպայի տնտեսական ինտեգրման համար, իսկ պաշտպանական ինտեգրման ուղղությամբ կատարվել էին լուրջ քայլեր: Պատմական իրադրության հետագա փոփոխություններն ավելի խո-

ռացրին ինտեգրացիոն գործընթացները, որի վերջնարդյունքը հանդիսացավ Եվրոպական Միության ստեղծումն իր ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության բաղադրիչով:

2. Եվրոպայի ԸԱԱՔ ոլորտի պատմական զարգացումը ընթացել է վերպետականության և վերջինիս միջկառավարական բնույթ հաղորդելու նկրտումների զուգորդմամբ: Ընդ որում, առաջինի ապահովման գործում էական պետք է համարել ԵՊԸ-ի, իսկ երկրորդի պարագայում՝ ՄԲՊ-ի դերակատարումը: Ուշագրավ է, որ վերպետականության կայացմանը կրկին նոր լիցք հաղորդեց Եվրոպական արդարադատության դատարանը, որի նախադեպային որոշումներով կյանքի կոչվեցին նշված գործընթացին նպաստող այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝ եվրոպական իրավունքի գերակայության, ուղղակի կիրառելիության, ուղղակի գործողության, անդամ պետությունների սահմանադրաիրավական նորմերի նկատմամբ Ընկերակցության իրավունքի նորմերի գերակայության և այլ սկզբունքներ:

3. ԵՄ իրավապայմանագրային դաշտի ձևավորման առաջին տասնամյակի վերլուծության արդյունքում կարող ենք արձանագրել, որ եվրոպական ԸԱԱՔ վերաբերյալ մոտեցումները ստացան նյութական տեսք՝ ամրագրվելով ԵՄՄՊ-ում և ԱՊ-ում, սակայն ի զորու չեղան առկա գործիքակազմով լիովին արձագանքելու կամ, առավել ևս, կանխարգելելու այդ ժամանակահատվածում ծագած ճգնաժամերը և հակամարտությունները: Ավելին, համաձայն ԵՄՄՊ նախաբանի և 2-րդ հոդվածի՝ իրականացվող անվտանգությունն ու ձևավորվող պաշտպանական քաղաքականությունը պետք է ամրապնդեին ԵՄ ինքնությունն ու անկախությունը, սակայն պաշտպանական հետևանքներով արտաքին քաղաքականության որոշումների իրականացումն անհնար էր առանց ԱԵՄ-ի, իսկ անդամ պետությունների ռազմական կարողությունները թույլ չէին տալիս ռազմական գործողություններ իրականացնել առանց ՆԱՏՕ-ի ներուժի ներգրավման, ինչով կասկածի տակ էր դրվում նախանշված նպատակների իրագործումը: Բացի այդ, ոլորտի միջկառավարական առանձնահատկության պատճառով լիակատար չէին խորհրդարանական և դատական վերահսկողական գործառույթները, և այդ մարմինների ներգրավվածությունը բնագավառին: Օրինակ՝ ԸԱԱՔ ոլորտը դուրս էր ԵՄ դատարանի իրավասության շրջանակներից: Նշեք նաև, որ յուրօրինակ իրավաբանական բանավեճերի տեղիք տված ԵԸ և ԵՄՄՊ V բաժնի համաձայնեցվածության հարցը, հաշվի առնելով ԸԱԱՔ sui generis բնույթը, սանկցիաներ կիրառելու առումով ստացավ ուշագրավ իրավական կարգավորում:

4. Կարելի է պնդել, որ ԱԵՄ-ի շրջանակներում փոխադարձ պաշտպանությունը չեր կարող փոխարինել ԵԱՊՔ պաշտպանական տարրի բացակայությանը և այն չէր կարող ինքնաբերաբար փոխանցվել ԵՄ-ին, քանի որ ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի մանդատների միջև սահմանները հստակեցված, իսկ նրանց

միջև կապերը գործարկված չէին: Անդամ պետությունների անվտանգության և պաշտպանության քաղաքականության ռազմավարական բնույթը ենթադրում էր նաև պաշտպանական կարողությունների ամբողջական փոխանցում, ներառյալ՝ սպառազինությունների արտադրությունը:

5. Ամբողջացնելով ԸԱՊՔ-ի արդի առաջընթացը, պետք է նշել, որ քննարկվող ոլորտում առկա են քաղաքական դիրքորոշումների տարամիտումներ: Այսպես, 2017 թ. նոյեմբերի 13-ին ԵՄ-ն, հանձինս ԱԳԱՔԲՆ-ի, հայտարարեց պաշտպանական ոլորտում ՄԿՀ (permanent structured cooperation) ձևաչափով 23 անդամ պետությունների միջև ձևավորված նոր համագործակցության վերաբերյալ: Հաշվի առնելով, որ ՆԱՏՕ-ից անկախ և ռազմական առումով ուժեղ Եվրոպայի ստեղծումը ձեռնտու չէ նախ և առաջ դաշինքի առաջատար ԱՄՆ-ին, վերջինս ՆԱՏՕ-ի 2017 թ. Բրյուսելի գագաթնաժողովում որդեգրեց կոշտ դիրքորոշում՝ անդամ երկրներին պարտավորեցնելով իրենց անվտանգության համար ունենալ ավելի մեծ ներդրում՝ կատարելով ֆինանսական պարտավորությունները, և, այդպիսով, հորդորելով ավելացնել սեփական անվտանգության համար ՆԱՏՕ-ի շրջանակներում հավաքագրվող գումարները: Հակառակ ԱՄՆ-ի մոտեցման, Ֆրանսիան և Գերմանիան ավելի ուշ (համապատասխանաբար՝ 2018 թ. օգոստոսի 27-ին և 2018 թ. նոյեմբերի 13-ին) հայտնեցին միասնական եվրոպական բանակի ստեղծման անհրաժեշտության մասին՝ վկայակոչելով ԵՄՊ-ի 42-րդ հոդվածի 7-րդ կետը և իրենց անվտանգությունը չվստահելով միայն ԱՄՆ-ին:

6. 20-րդ դարի վերջի և 21-րդ դարի սկզբի ԵՄ-ի արտաքին քաղաքականությունը կարելի է բնութագրել միասնականացման միտումներով: Քննարկվող ոլորտում խրախուսվում էր ԵՄ-ի անդամ երկրների միջև տեղեկատվություն փոխանակումը՝ ձևավորելով ընդհանուր հասկացություններ և դրանց հիման վրա ստեղծելով արտաքին քաղաքականության հատուկ գործիքակազմ: Որպես այդպիսիք՝ հանդես են գալիս հետևյալ հարթակները՝ coordination reflex, acquis politique, COREU, coutumier, receuil, domaines réserves և այլն:

7. Չնայած ՀԸԳՀ-ի բովանդակային թերություններին և կիրարկման կառուցակարգերի ոչ լիարժեք լինելուն՝ հարկավոր է ընդգծել, որ համաձայնագրի ստորագրմամբ ՀՀ արտաքին քաղաքականության բնագավառում կարող է կենսագործվել մի մոտեցում, որի պարագայում «կամ-կամ»-ի քաղաքականությունից անցում է կատարվում «և-և»-ի քաղաքականության: Այն, հաշվի անելով Հայաստանի բարդ աշխարհագրական դիրքը և աշխարհաքաղաքական դրությունը, օբյեկտիվորեն առավել ընդունելի տարբերակ է:

8. Հաշվի առնելով, որ ՀՀ-ն հանդիսանում է ՀԱՊԿ հիմնադիր անդամ, իսկ ԵՄ-ի պաշտպանական քաղաքականությունը իրականում առավելապես իրացվում է ՆԱՏՕ-ի միջոցով, գտնում ենք, որ նշված ռազմաքաղաքական

դաշինքների հակասությունների սրման ներկայիս փուլում ՀՀ-ն վերոհիշյալ դաշինքների միջև կարող է հանդիսանալ յուրատեսակ միջնորդ՝ քաղաքական երկխոսության վերսկսման և ռազմաքաղաքական լարվածության նվազեցման համատեքստում: Ընդ որում, նշված մոտեցման համար, մեր դիտարկմամբ, էական խոչընդոտ չեն կարող հանդիսանալ ՀԱՊԿ-ի ներքին հակասությունները և ՆԱՏՕ-ի հետ ՀՀ-ի սահմանափակ, ոչ ռազմավարական հարաբերությունները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Գարիկ Խուդոյան «Терроризм и угрозы безопасности в современном мире» // Արդարադատություն, Եր., 2016, № 3 (34), էջեր 85-90:
2. Գարիկ Խուդոյան «ՄԱԿ-ի իրավական կարգավիճակի և փաստական գործելակերպի տարամիտումը» // Регион и мир, Եր., 2017, № 2, էջեր 87-95:
3. Գարիկ Խուդոյան «Политика безопасности или безопасная политика?» // Регион и мир, Եր., 2018, № 1, էջեր 48-56:
4. Գարիկ Խուդոյան «Legal competition on different levels: Supranationalism or Intergovernmentalism? » // Регион и мир, Եր., 2018, № 1, էջեր 97-102:
5. Գարիկ Խուդոյան «Եվրոպական պաշտպանական ընկերակցության ձախողման պատմաիրավական պատճառները» // Регион и мир, Եր., 2018, № 2, էջեր 80-87:
6. Գարիկ Խուդոյան «Եվրոպական քաղաքական գործընթացների և ընդհանուր արտաքին քաղաքականության ձևավորման և զարգացման միտումները 1950-1990 թթ. պատմաիրավական համատեքստում» // Регион и мир, Եր., 2018, № 3, էջեր 127-135:
7. Գարիկ Խուդոյան «Constructive or Destructive? The Role of NATO in CFSP/CFDP of EU» // Регион и мир, Եր., 2020, № 1, էջեր 89-98:

Резюме

ХУДОЯН ГАРИК МАРТЫНОВИЧ

ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ОБЩЕЙ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ И ПОЛИТИКИ БЕЗОПАСНОСТИ ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА

Последние десятилетия ознаменовались всё более растущим интересом к Европейскому Союзу как к состоявшемуся наднациональному интеграционному образованию, и особенно, к общей внешней политике и политике безопасности ЕС, с учётом нестабильной мировой геополитической обстановки и нарастающих угроз безопасности в современном мире.

В диссертации рассмотрены основные тенденции становления общей внешней политики и политики безопасности ЕС, начиная с 50-х годов XX-ого века, которые происходили одновременно с процессом становления самого Европейского Союза.

Проанализированы исторический процесс развития общей внешней политики и политики безопасности ЕС, правовые документы, регулирующие их, с последующим выявлением имеющихся недостатков и проблем в регулировании, а также предоставлен необходимый правовой инструментарий для разрешения спорных и неоднозначных вопросов. Анализу подвергнуты, в том числе, деятельность институтов ЕС и процедуры принятия ими решений по вопросам внешней политики, безопасности и обороны ЕС.

Ещё одной особенностью рассматриваемой диссертации является представленный анализ правовых и программных аспектов сотрудничества Республики Армения и ЕС по исследуемой тематике, а также взаимодействие военно-политических блоков НАТО и ОДКБ в контексте представленности в них большинства государств-членов ЕС и РА.

В диссертации подвергнуты критике некоторые процедуры голосования в институтах ЕС по вопросам ОВПБ/ОПБО ЕС, согласно которым в перечисленных сферах решения должны приниматься единогласно. В результате, реализация «единой Европейской политики», касательно, как вопросов несовпадения внешнеполитических ориентиров, так и защиты национальных интересов и приоритетов стран-членов ЕС в вопросах общей оборонной политики, оказывается невозможной. В этой связи проблемным считается и ограниченная оперативность принятия решений.

Данное исследование затрагивает также вопросы состоятельности и самостоятельности оборонной составляющей ЕС с учётом и по настоящее время проводимого им миротворческих операций и миссий, принимая во внимание вовлечённость Соединённых Штатов в дело или попытку

становления квазинезависимой ОВПБ/ОПБО, и зависимость Европейской оборонной политики от ресурсов НАТО. Были учтены современные подходы как лидеров передовых стран ЕС, так и руководства США.

Анализу подвергнуты так же и правовые аспекты взаимодействия РА и ЕС по Соглашениям о партнёрстве и сотрудничестве и о всеобъемлющем и расширенном партнёрстве между РА и ЕС, концепции Европейской политики соседства и инициативы Восточного Партнёрства, на основе которого автором выделены краеугольные аспекты сотрудничества в области безопасности, с указанием основных недостатков и разночтений.

Предметом исследования стали, в том числе, правовые документы ОДКБ. Анализу подвергнуты проблемы взаимоотношений между странами-участницами в структуре ОДКБ и разобщённость их позиций на международной арене. Рассмотрены взаимоотношения между ОДКБ и НАТО, с учётом двухстороннего практического и политического сотрудничества РА и НАТО и вовлечённости вооружённых сил РА в некоторые миротворческие операции, проводимые под руководством НАТО. В этом контексте были выдвинуты соответствующие предложения по поводу внесения изменений в Договор и Устав ОДКБ для обеспечения интересов национальной безопасности РА, как приоритетного направления, а так же для координации совместных подходов и позиций для плодотворного взаимовыгодного взаимодействия государств-членов по всем аспектам сотрудничества, и, в конечном счёте, для поднятия статуса организации как региональной и мировой составляющей безопасности и стабильности.

В частности, автор считает целесообразным применение в рамках ОДКБ подхода к аналогичной 5-ой статье Договора о НАТО, согласно которой нет необходимости в обращении за помощью к государствам-членам и к самой организации в случае внешней агрессии и/или вооружённого нападения на одну из стран-участниц договора. А для усиления позиции ОДКБ на международной арене в вопросах безопасности и внешней политики, необходимо объединение позиций государств-членов и постоянная демонстрация единого подхода, вне зависимости от существующих внутренних противоречий или разногласий. В отношении государства-члена ОДКБ, не соблюдающего данную норму, должны быть применены соответствующие санкции.

Основные положения диссертации отражены в опубликованных научных статьях и обсуждены на кафедре конституционного права юридического факультета Ереванского государственного университета и на кафедре теории государства и права и конституционного права Академии Образовательного комплекса полиции Республики Армения.

Summary

GARIK MARTIN KHUDOYAN

THE LEGAL ISSUES OF EUROPEAN UNION'S COMMON FOREIGN AND SECURITY POLICIES

The last decades have been marked by an ever-growing interest in the European Union as an established supranational integration entity, and particularly in the EU's Common Foreign and Security Policy, considering the unstable global geopolitical situation and the growing security threats in the modern world.

The dissertation examines the main trends of formation of the EU's Common Foreign and Security Policy since the 50s of the 20th century, simultaneously with the process of formation of EU.

The historical process of development of the examined field and the legal documents regulating it have been analyzed, followed by the identification of existing shortcomings and problematic regulations and legal tools necessary for resolving controversial and ambiguous issues have been provided. The analysis includes, inter alia, the activities of EU institutions and their decision-making procedures on EU foreign, security and defense policy.

Another feature of the thesis is the presented analysis of the legal and programmatic aspects of cooperation between the Republic of Armenia and the EU on the subject under study as well as the interaction between the military-political blocs of NATO and CSTO in the context of membership in them of most of EU member states and the Republic of Armenia respectively.

In the scientific paper some of the voting procedures in the EU institutions on the Common Foreign and Security Policy and the Common Security and Defense Policy of the EU have been criticized, according to which decisions in the listed areas must be taken unanimously. As a result, the implementation of the "Common European Policy" in the context of mismatching foreign policy guidelines and protection of national interests and priorities of the EU member states in matters of the Common Defense Policy seems to be impossible. In this regard, the decision-making limited efficiency is also considered problematic.

This study also touches upon the issues of consistency and independence of the EU's defense component, even considering its current peacekeeping operations and missions, taking into account the involvement of the United States in the case or attempt to become a quasi-independent CFSP/CSDP, and the dependence of the European defense policy from NATO resources. Both the

modern approaches of the leaders of EU leading countries and the US leadership were considered.

The legal aspects of the interaction between the Republic of Armenia and the EU under the Partnership and Cooperation Agreement and the Comprehensive and Expanded Partnership Agreement between the Republic of Armenia and the EU, the concept of the European Neighborhood Policy and the Eastern Partnership Initiative were also analyzed and the cornerstone aspects of cooperation in the field of security were highlighted by author indicating the main shortcomings and discrepancies.

The subject of the research was, inter alia, the legal documents of the CSTO. The problems of relations between the participating countries in the structure of the CSTO and the disunity of their positions in the international arena have been subjected to further analysis. The relationship between the CSTO and NATO was also studied considering the bilateral practical and political cooperation between the Republic of Armenia and NATO, and the involvement of the Armed Forces of the Republic of Armenia in some peacekeeping operations conducted under the leadership of NATO. In this context, conceptual drafts of amendments to the Treaty and the CSTO Charter were proposed, primarily to ensure the interests of the national security of the Republic of Armenia, as well as to coordinate joint approaches and positions for mutually beneficial and fruitful interaction of the member states in all aspects of cooperation and ultimately, to raise the status of the organization as a regional and global component of security and stability.

In particular, the application within the framework of the CSTO of an approach alike the Article 5 of NATO Treaty, according to which there is no need to seek help from member states and the organization itself in cases of external aggression and/or armed attack on one of the participating countries, has been considered expedient. And to strengthen the position of the CSTO in the international arena on security and foreign policy issues the unification of the positions of the member states and the constant demonstration of a common approach were found necessary, regardless of existing internal contradictions or disagreements. In relation to those who do not comply with this norm, the CSTO member state should be imposed appropriate sanctions.

Key provisions of the dissertation are reflected in the published scientific articles and have been discussed at the Chair of Constitutional Law of Law Faculty of Yerevan State University and the Chair of Theory of State and Law and Constitutional Law of Academy of Educational Complex of Police of the Republic of Armenia.